ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի նոյեմբերի 19-21-ը

Բուլղարիայի Հանրապետություն (ք. Բուրգաս)

գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Անուշ Բաբայան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Բուլղարիայի Հանրապետություն (ք. Բուրգաս), 2017 թվականի նոյեմբերի 19-21-ը:

4. **Գործուղման նպատակը՝**

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) անդամ պետությունների զբոսաշրջության հարցերով աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները՝**

2017 թվականի նոյեմբերի 19-21-ը Բուլղարիայի Հանրապետություն (ք. Բուրգաս) կատարված այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) նախորդ նիստի արձանագրության կետերով իրականացված աշխատանքները,
- Գաստրոնոմ և գինու զբոսաշրջության վերաբերյալ ՍԾՏՀ անդամ երկրների կողմից մինչ այժմ կատարված աշխատանքները և համապատասխան տեղեկատվության հավաքագրման հնարավորությունները,
- 2016 թվականի ընթացքում, ՍԾՏՀ անդամ երկրներում իրականացված միջոցառումները, ինչպես նաև նախատեսվելիք միջոցառումներին ՍԾՏՀ անդամ երկրների մասնակցության հնարավորությունը,
- նոր և արդեն իսկ գոյություն ունեցող ծրագրեր՝ ուղղված Մետաքսի ճանապարհի շրջանակներում կայուն զբոսաշրջության զարգացմանը,
- ներկայացվեցին ՄԱԿ ԶՀԿ հետ համագործակցությամբ ստեղծված նախաձեռնությունները՝ ուղղված Արևմտյան Մետաքսի ճանապարհի զբոսաշրջության զարգացմանը,
- ռազմավարությունները՝ ուղղված Արևմտյան Մետաքսի ճանապարհի՝ որպես կայուն զբոսաշրջային երթուղու զարգացմանը, ինչպես նաև՝ Մետաքսի ճանապարհի գործունեությունը 2017թ.՝ կայուն զբոսաշրջության զարգացման միջազգային տարվա շրջանակներում,
- ՍԾՏՀ և ՄԱԿ ԶՀԿ միջև համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի կետերով նախատեսված միջոցառումների կատարումը,
- հայկական կողմի ներկայացված Մետաքսի ճանապարհի շրջանակներում «Silk Road Wine Trail" զբոսաշրջային արդյունքի ձևավորման և խթանման ռազմավարությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի ընթացքում տեղի ունեցան հետևյալ հանդիպումները.

- Բուլղարիայի Հանրապետության զբոսաշրջության զբոսաշրջության նախարարի տեղակալ Իրենա Գուերգուեվայի,
- Բուլղարիայի Հանրապետության զբոսաշրջության նախարարության միջազգային համագործակցության վարչության պետական փորձագետ Գերոգի Ալապիևի,

- Բուլղարիայի Հանրապետությունում Ուկրաինայի դեսպանատան տնտեսական հարցերով խորհրդական Ռուստամ Ազդարի,
- ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային ծրագրի պաշտոնատար Բեկա Ջակելիի,
- ՍԾՏՀ անդամ երկրների (Բուլղարիայի Հանրապետության, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Թուրքիայի) ներկայացուցիչների հետ:

Նիստի ընթացքում հայկական կողմը ներկայացրել է Մետաքսի ճանապարհի շրջանակներում «Silk Road Wine Trail" զբոսաշրջային արդյունքի ձևավորման և խթանման ռազմավարությունը: Տեղեկացնում ենք, որ 2017թ. մարտի 30-31-ը Մետաքսի ճանապարհի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ և ՍԾՏՀ հովանու ներքո Հայաստանի, Վրաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Իսպանիայի և այլ հետաքրքրված երկրների մասնակցությամբ Մետաքսի ճանապարհի շրջանակներում «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի ձևավորման և խթանման ռազմավարություն մշակելու և իրականացնելու ծրագրի վերաբերյալ առաջարկը հավանության էր արժանացել, և նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ հայկական կողմը, հանդիսանալով նախաձեռնող, հարցը կներկայացնի նաև 2017թ. նոյեմբերի 20-ին Բուլղարիայի Հանրապետությունում (ք. Բուրգաս) կայանալիք ՍԾՏՀ անդամ պետությունների զբոսաշրջության հարցերով աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում և այնուհետև կդիմի Եվրամիության կամ այլ դրամաշնորհային ծրագրերին ծրագրի իրականացման համար համաֆինանսավորում ապահովելու նպատակով:
Նիստի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն Մետաքսի ճանապարհի շրջանակներում «Silk Road Wine Trail" զբոսաշրջային արդյունքի ձևավորման և խթանման ռազմավարությունը պաշտոնապես ՍԾՏՀ գլխավոր քարտուղարին փոխանցելու վերաբերյալ:

- ՍԾՏՀ անդամ երկրների հետ քննարկվեցին նաև համագործակցության շրջանակները և հեռանկարները:

- Պայմանավորվածություն ձեռք բերվել ՄԱԿ ԶՀԿ հետ Մեատաքսի ճանապարհի շրջանակներում Հայաստանում կազմակերպվող ավանդական փառատոնների և այլ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ՄԱԿ ԶՀԿ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու ուղղությամբ,

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Ստորագրվել է զբոսաշրջության համագործակցության մասին ՍԾՏՀ աշխատանքային խմբի հանդիպման հաշվետվությունը:

8. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Անուշ Բաբայան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24 նոյեմբերի 2017թ.: